

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ  
2025

ՀՈՒՆԻՍ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ  
ԵՎ  
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացնելու առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-զրույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադիր եղիք պատասխանների ձևաբուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ք X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

**1** Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում փակագծերում նշված տառը:

- 1) հազոր-, հար-աշաղախ, կորնթար-, ար-մնի (η)
- 2) առօր-ական, ելե-ջել, աշտ-ակիր, ոստր- (ե)
- 3) լոել-այն, քրիստոն-ա, հա-ելի, բար-ացակամ (յ)
- 4) գեղ-ուկ, գաղ-, հաղար-, զեղ-ել (զ)

**2** Ո՞ր շաբքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:

- 1) բա-ադ, հե-են, տա-ալուծել, ու-ափառ
- 2) ֆի-ական, ին-ասուն, ք-ախույզ, այ-ենարան
- 3) ա-ահայր, ըն-իմակաց, մանրազ-ին, անդո-ազիր
- 4) ի-սունինը, եր-ենցաղ, երեսունե-որդ, վշտա-ուկ

**3** Ո՞ր շաբքի բոլոր բաղադրյալ հասուկ անուններում է միայն մեկ բաղադրիչը գրվում մեծատառով:

- 1) ՍԵԾ ԵՂԵՇՆ, ՀՈՒԼՅԱՆ ՏՈՄԱՐ, ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐ ԿՂԶԻ
- 2) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆԻՉ, ՀԱՐՅՈՒՐԱՍՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ
- 3) ՆՈՐ ՏԱՐՎԱ ՏՈՆԵՐ, ՍԵԾԱՄՈՐԻ ԱՏՈՄԱԿԱՅԱՆ, ՔԱԶ ՆԱԶԱՐԻ ՀԵՔԻԱԹԸ
- 4) ՀԻՆ ՀՈՌՈՄ, ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱԶԻ ՇՔԱՆՇԱՆ, ԲԵՆԻԼՅՈՒՔՍԻ ԵՐԿՐՆԵՐ

**4** Ո՞ր շաբքի բոլոր բառերում զաղտնավաճիկ կա:

- 1) նկարակալ, շրջագայություն, ձեռնամարտ
- 2) հստակություն, կապտել, թռչուն
- 3) թվարկություն, գրաշար, զմրուխտյա
- 4) հնարամիտ, խոսակցական, վնասազերծել

**5** Ո՞ր շաբքի բոլոր բառերում *յա* երկինչյունի հնչյունափոխություն կա:

- 1) ատենակալ, կենարար, մեհենական
- 2) սյունակափոր, մատենազիր, հեծելազոր
- 3) պատենակոր, հյուլեական, կատարելազործել
- 4) միութենական, գործունեություն, այժմեական

**6** Ո՞ր շաբքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **հացի կարոտ** - ապրուստի միջոցներից զուրկ, կոտր ընկճել - հակառակվել
- 2) **քոք կոպեկ չտալ** - նյութական նվազագույն օգնություն ցույց չտալ, սրտում կրակ վառել - ոգեշնչել
- 3) **ուղար պոչով կոլ տալ** - զոփող լինել, պղտոր ջրում ձուկ որսալ - խառնաշփոք վիճակից օգուտ քաղել
- 4) **հեքիաքներ պատմել** - ճիշտ չխսել, թևի տակ առնել - նեցուկ կանգնել

**7 Ο՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:**

- 1) անթացուպ, ջրմուղ, հավաքատեղ, որկրամոլ
- 2) կոճգամ, գրագետ, սնահավատ, ապշահար
- 3) բանսարկու, մարդատար, գովազդատու, բանասեր
- 4) թքագեղձ, սրախողիսող, մակնիշ, ակնբախ

**8 Ο՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:**

- 1) վարդաջուր, գետնանուշ, դառնաթախիծ, սևումութ
- 2) կարեվեր, որմնախորշ, ազգամիջյան, ագեվազ
- 3) ջրագուավ, դրոշակակիր, դնչակալ, տարեվերջ
- 4) շրջակա, մենասահը, քարածուխ, դասալիք

**9 Ο՞ր տարրերակի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

- 1) իմաստակ-տգետ, մույթ-ոտնաման
- 2) արգանակ-ապուխտ, շավիդ-արահետ
- 3) սրտաբեկ-վշտահար, երկշոտ-վեհերոտ
- 4) շեղ-կույտ, անկապտելի-ամբարտավան

**10 Ο՞ր տարրերակում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնց կազմությունը ճիշտ է տրված:**

1. **անկայուն** - նախածանց+արմատ
2. **ապերասան** - նախածանց+արմատ
3. **քղանցք** - արմատ+արմատ+վերջածանց
4. **դասացուցակ-** արմատ+հոդակապ+արմատ
5. **անարգանք** - նախածանց+արմատ+վերջածանց

- 1) 2, 4, 5
- 2) 1, 2, 4
- 3) 2, 3, 5
- 4) 1, 3, 4

**11 Ο՞ր նախադասության մեջ սոսկածանցավոր բայ չկա:**

- 1) Նա զարթնեց, պղտոր հայացքով նայեց շուրջը, կողքին կանգնած բուժքրոջը:
- 2) Թորշոնած վարդերի թերթիկները, մեկիկ-մեկիկ պոկվելով, ընկնում էին վար:
- 3) Մշուշը սողալով լեռներից կիրճն էր իշել՝ թափալոր լցվելով ձորը:
- 4) Նա շղիպավ աղքատիկ ճաշին, որ թերել էին իր համար, միայն վերցրեց խեցեղեն ամանը, խմեց ջուրը՝ փոքր-ինչ զովացնելու սրտի տապը:

**12 Ο՞ր նախադասության մեջ մակբայ չկա:**

- 1) Այծյա՞մը հանկարծ մոտակա ժայռից Անդունդը մի քար գլորեց ոտքով:
- 2) Ինչպես փորորիկ՝ սաստիկ սրբնթաց, Գյուղից պլացան մի խումբ կտրիճներ:
- 3) Ինձ կիհշեն, Երբ մտնեն անտառ, Լսեն հոկա կաղնիների Հեքիաքներն անբառ:
- 4) Սրբնթաց պախրա՞”, թե՞ զայլ գիշատիչ Շեշտակի անցավ փարախի մոտով:

**13** Ո՞ր շաբթում են ճիշտ նշված բոլոր այն բայերի համարները, որոնք ներգործական սեռի են:

Ես 1. լոեցի: Հայացրս 2. փախցրի նրանից: Նա դեմքը 3. մոտեցրեց ինձ, 4. զտավ իմ աչքերը և 5. վախվորած նայեց ուղիղ աչքերիս մեջ: Ոչինչ 6. ասել պետք չէր. նա իսկույժ ամեն ինչ 7. հասկացավ: 8. Հառայեց և բաշկինակի ծայրով 9. սրբեց բարբիչներից կախված արցունքի վերջին կարիքները և այլևս ոչինչ 10. չխոսեց:

- 1) 1, 3, 4, 5, 7, 8
- 2) 2, 3, 4, 6, 7, 9, 10
- 3) 2, 4, 5, 7, 9, 10
- 4) 1, 2, 3, 4, 8, 9

**14** Ո՞ր շաբթի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում -եր վերջավորությամբ:

- 1) թոշնաբույծ, սանր, կողաքն, միջնապատ
- 2) բնագիր, անվաղող, պահանջատեր, սեպագիր
- 3) ցուցափայտ, երկրամաս, գետաձի, ուղեցույց
- 4) ջրատար, կցակար, գորգեզր, սալաքար

**15** Ո՞ր շաբթի բոլոր բառերի գործիական հոլովը կարող է կազմվել *թ-ով*:

- 1) արյուն, կատաղություն, մաս
- 2) երդում, անուն, խիզախություն
- 3) անկյուն, կատարում, սյուն
- 4) խափանում, նորություն, իրավունք

**16** Ո՞ր տարբերակում դերբայական դարձված չկա:

- 1) Կամրջի վրայով անցնելիս աջուձախ չէր նայում:
- 2) Անիրաժեշտ էր մի քանի օրով գյուղ գնալ:
- 3) Մոտեցավ ու ջերմ բարեւեց այգին մշակող այգեպանին:
- 4) Ծերունին թափ տվեց ոտքերի փոշին և առանց շրջվելու հեռացավ քաղաքից:

**17** Ո՞ր նախադասության մեջ միջակետ չի կարող դրվել:

- 1) Ծաղրածուի խոսքերը վաթառնամյա Լիր արքայի սրտում մտավախություն են ծնում մի՞թե կրտսեր դուստրն էլ է նման մյուսներին:
- 2) Ուրիշ ելք չունենալով հրացանները տեղադրեց տարբեր տեղերում տարբեր դիրքերից էր կրակելու ցույց տալու համար թե դեռ դիմադիր ուժեր կան:
- 3) Հիշում եմ երբ Վանի արեր կանգնում էր զենիթում փոքր ժամանակ արևն ինձ մեծ շատ մեծ էր թվում ծովից եկող մեղմ սյուլքը փարվում էր քաղաքին:
- 4) Բայց այդ պահին մտածել սառը դատել անկարող էի բարկությունը նախանձն ու կատաղությունը տակնուվրա էին անում սիրտս:

**18** Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը ճիշտ փոխակերպված պարզի:


- 1) *Սեմեկան տղայի մեջ բացահայտեց բացառիկ ընդունակություններ, երբ նա դեռ սովորում էր Արենքում:*  
Սեմեկան տղայի մեջ բացահայտեց բացառիկ ընդունակություններ նրա՝ դեռ Արենքում սովորելու ժամանակ:
- 2) *Ես չեմ պատմում այն բանաստեղծի մասին, որ երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ծեմելիս իրեն ծովն է նետել:*  
Ես չեմ պատմում երեկոյան ծովախորշի արծաթե ջրերի վրա մակույկով ճեմող բանաստեղծի՝ իրեն ծովը նետելու մասին:
- 3) *Մայրս մինչև անգամ պարծեցավ, որ զավակն իր կամքով ուսումնարան է մտել:*  
Մայրս մինչև անգամ պարծեցավ իր կամքով ուսումնարան մտած զավակով:
- 4) *Ամենավտանգավորն այն սուսն է, որ քիչ է տարրերվում ճշմարտությունից:*  
Ամենավտանգավորը սոի՝ ճշմարտությունից քիչ տարրերվելն է:

**19** Ո՞ր տարրերակում նախադասության անդամի շարահյուսական վերլուծության սխալ չկա:

*Ծառերի՝ միմյանց ներկյուսված սաղարթները, ստեղծելով մի ամրողական ծածկույթ, գիշերվա մթի մեջ նրանով անցնող ուղևորի համար անտառն ավելի սարսափազու էին դարձրել:*

- 1) **միմյանց** -հանգման խնդիր, ծածկույթ -ուղիղ խնդիր
- 2) **նրանով**-տեղի պարագա, **ուղևորի** համար -նախակի պարագա
- 3) **սարսափազու**-ուղիղ խնդիր, **սաղարթները** -ենթակա
- 4) **մթի** -հատկացուցիչ, **ներկյուսված** -որոշիչ

**20** Ո՞ր նախադասությանն է համապատասխանում տրված գծապատկերը:



- 1) Օրիորդը մի քանի անգամ բարձրացրել էր վարագույրները՝ ժայռերից վերև ելնող ծխի մի այուն տեսնելու, բայց թվում էր, թե մառախուղը րոպե առ րոպե նոր երանգներ է ստանում, որոնց մեջ նրա երևակայությունը վատ նախագուշակումներ նշնարեց:
- 2) Հենց այդ ժամանակ լրացավ իմ յոթ տարին, սկսեցի հետաքրքրվել աստղային երկնքով, և բոլորը միանգամից գլխի ընկան, որ ես մեծ մարդ եմ դառնալու, որովհետև գիշերները նայում էի լեռան գագարին, որի վրա ասես աստղեր էին թափվում:
- 3) Արքան խոսում էր դանդաղ, բառերը ձգում, որպեսզի իր խոսքերը, որոնց ճշմարտությանը իմքը չէր կասկածում, երկար հնչեին օդի մեջ՝ համոզությունը սաստկացնելու համար:
- 4) Հին կամքի գերանները դողում են շյուղի նման, գետը ծանր քարեր է շպրտում կամարի հիմքերին, թվում է՝ զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի:

**21 Ո՞ր տարրերակում հատկացուցիչ ստորադաս նախադասություն կա:**

- 1) Սեզ վաղուց էին պատմել նրա մասին, ով բազում քաջագործություններ էր կատարել և ազատել երկիրը թշնամիներից:
- 2) Մառախուղն ինձ թաքցրեց նրանց տեսադաշտից, ովքեր արդեն շուրջ երեք օր կրնկակոյն հետևում էին ինձ:
- 3) Մուշեղը մտավ նրանց արհեստանոցը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնական շուկայում:
- 4) Այս գավաթը նրան է պատկանում, ով հաղթանակ կտանի սրամարտում:

**22 Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

«Այս հիշատակարանն իմ ճեղոքն ընկալ պատահական կերպով. թե ինչպես, հետաքրքրական չէ: Սա մի մեծ տեսոր էր, որի մեջ «կորսած մարդը», ինչպես ինքն էր ենթավերնազրել իր հիշատակարանը, երկար տարիներ, համարյա թե օրը օրին զրի է անցրել իր անհատական կյանքի անցուղարձը»:

- 1) Նար-Դոս. «Ես և նա»
- 2) Ա. Շիրվանզադե. «Արտիստը»
- 3) Ա. Բակունից. «Խոնարհ աղջիկը»
- 4) Ա. Իսահակյան. «Սաադիի վերջին գարունը»

**23 Գրերի ստեղծումից հետո առաջինը Աստվածաշնչի ո՞ր գիրքը սկսեցին թարգմանել Մերոպ Մաշտոցն ու իր աշակերտները:**

- 1) Ծննդոց գիրքը
- 2) Դավթի սահմուները
- 3) Ժողովողի գիրքը
- 4) Սոլոմոնի առակները

**24 Ո՞ր տարրերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Ամենափրկիչ վանքի բակում՝ հարավային պարսպի տակ գտնվող գետնախորշում, ..... այժենակածի վրա թեք էր ընկել Ուկանը:

- 1) որ մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան
- 2) այն մի ժամանակ ծառայել էր որպես ցորենի մառան
- 3) մի ժամանակ ծառայելով որպես ցորենի մառան
- 4) մի ժամանակ որպես ցորենի մառան ծառայած

**25 Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:**

Թեև շատ էր ծերացել Սաադին, սակայն նրա հոգին երազի աշքերով և ականջով երազի տեսնում էր ու լսում աշխարհի քննադիրներն ու ծերերը, երգերն ու լուրջումը անհայտ ոլորտների, որովհետև տակավին զրույց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդ ողին:

- 1) համեմատություն
- 2) շրջադասություն
- 3) փոխարերություն
- 4) մակոր

**26** Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Եվ ողբացին լալահառաչ դժխւմ բախտը Հայաստանի  
Եվ հուսացին արդարության մի խոլ աստծու դատաստանի:*

- 1) «Մեր պատմիչները և մեր գուսանները» (Ա. Իսահակյան)
- 2) «Վահագն» (Ե. Չարենց)
- 3) «Հայոց լեռներում» (Հ. Թումանյան)
- 4) «Սի՞թե վերջին պոետն եմ ես» (Վ. Տերյան)

**27** Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական միջտ կառուցվածքին:

1. Հայ մեծանուն զիտնականը գրել է. «Դրանք կուտակված բազմաթիվ մեծ և փոքր աստղեր են, որոնք աղոտ երևալու հետևանքով միավորված լույսով են երևում»:
  2. Հազար տարի հետո միայն՝ 17-րդ դարում, Գալիլեո Գալիլեյը, աստղադիտակն ուղղելով երկնքի դեպի այդ տիրույթը, հաստատեց Շիրակացու առաջ քաշած միտքը:
  3. 18-րդ դարից սկսվում է գալակտիկաների հայտնաբերման և ուսումնասիրման պատմությունը, և պարզվում է, որ Ծիր կարինից բացի, որը մեր գալակտիկան է (Արեգակնային համակարգը գտնվում է նրա թներից մեկում), գոյություն ունեն բազմաթիվ այլ գալակտիկաներ:
  4. Երկնային մարմիններով, համաստեղություններով, երկնակամարի վրա մշուշոտ թույլ լույսով երևացող շերտով, որ մարդիկ Ծիր կարին կամ Հարդագողի ճանապարհ են անվանել, զիտնականները վաղուց են հետաքրքրվել, և դեռևս 7-րդ դարում Անանիա Շիրակացին վերջինիս մասին մի ուշագրավ եզրակացություն է արել:
- 1) 4, 1, 2, 3
  - 2) 4, 1, 3, 2
  - 3) 3, 1, 2, 4
  - 4) 3, 4, 1, 2

**28** Գ. Զոհրապի ո՞ր նովելից է տրված հատվածը:

*«Նշանուոքք Պատրիարքարանի մեծ դահլիճը կատարված չէր հարկավ ...  
Պարզապես, հավիտյան իրար սիրելու խոսք տված էիմ, զիշեր մը, ծառի մը տակ՝  
աստղերը ունենալով իրենց վկա. և աշխարհիս ամենեն մեծահանդես նշանուոքք եղած  
էր իրենցը»:*

- 1) «Փոստակ»
- 2) «Այրին»
- 3) «Այինկա»
- 4) «Զարուղոն»

**29** Տրվածներից ո՞րը չի համապատասխանում Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի սյուժեին:

- 1) Անուշը խելագարվում է և նետվելով Դերեղի ալիքների մեջ՝ մահանում:
- 2) Աղրյուրից ուշ վերադառնալու համար մայրը պատժում է Անուշին և արգելում Սարոյի հետ հանդիպել:
- 3) Անուշը Սարոյի հետ փախչում է սարերը, հետո վերադառնում է հոր տուն:
- 4) Մոսին հետապնդում ու սպանում է Սարոյին:

**30** Ո՞ր տողով է ավարտվում Մ. Սեծարենցի «Աքասիաներու շոթին տակ» բանաստեղծությունը:

- 1) Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե
- 2) Նըլազն անոր կը հեծեծե հեշտական
- 3) Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
- 4) Ի՞նչ հեշտին է մըթնշաղն այս սատափե

**31** Ա. Բակունցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Ավին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրվեց ձյունի մեջ, վզզաց, ինչպես շիկացած խոփը դարրնոցի ջրաքարում։ Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիշն էր։ Ավին միմն վերջ էլ չիմացավ, թե ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառավ։»

- 1) «Սիրիավ»
- 2) «Սպիտակ ճին»
- 3) «Մքնաձոր»
- 4) «Ալպիական մանուշակ»

**32** Ո՞ր պնդումն է ճիշտ Հ. Մաքսոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:

- 1) Ունենոր Իշխան հոր տնից Աղունը հարս էր եկել առանց օժիտի։
- 2) Սիմոնի ծնողները և հարազատները սկզբում մեծ խանդավառությամբ էին ընդունել Աղունին։
- 3) Աղունի մայրացուն դեմ էր, որ Աղունը ամուսնանա Սիմոնի հետ։
- 4) Աղունը համաձայնում է ամուսնանալ Սիմոնի հետ այն բանից հետո, եթե իմանում է, որ իր հորաքույր Մանիշակի գյուղն է զնալու։

**33** Ո՞ր նախադասություններում զիջման պարագա կա:

1. Քույրս դպրոցի լավագույն աշակերտուիկն էր, իսկ ես, փոխանակ դասերս սովորելու, ժամանակս վատնում էի բակային խաղերի վրա։
2. Օդը, սակայն, այստեղ ցուրտ էր, գետինը՝ խոնավ, բուսականությունից զորկ։
3. Ես, չնայած իմ անուղղելի լավատեսությանը, այստեղ զգում էի մի մեծ ու հորդաբուխ ուժի տագնաապալի ազրեցությունը։
4. Եվ գուցե միայն սենյակում մի խուլ, Գլուխը թեքած պատկերիս վրա, Կնայի մի կին աչքերիս տխուր, Ու կարցունքոտվեն աչքերը նրա։
5. Քանի տարի էր, ինչ Թուրլվանտա Քորոն և Փալանձի Գրիգորն ամուսնացած էին, բայց հակառակ բուռն ցանկության՝ զավակ չունեցան։

**34** Ո՞ր բառերում մեկից ավելի հնչյունափոխություն կա:

1. տարագրություն, 2. գրչատուի, 3. տարեշրջան, 4. թախծախառն, 5. աներևութանալ, 6. դստրիկ, 7. հանդգնել, 8. միջնազիծ

**35** Ո՞ր բառերն են միմյանց հոմանիշ:

1. խանդադատել, 2. ծեքծեքել, 3. խանդավառվել, 4. պարուրել, 5. նազել, 6. պչրել, 7. խոնջանալ, 8. սեթսեթել

**36** Նախադասության անդամներից որո՞նց ձևաբանական վերլուծությունն է սխալ:

Եթե զինվորների շողշողուն գենքերը չլինեին, հեռվից դիտողին կրվար, թե քարե դարի մարդիկ են հավաքվել սեղանի շորջ:

1. մարդիկ - ու հոլովման գոյական
2. հավաքվել - անորոշ դերբայ
3. չլինեին - անկանոն բայ
4. շորջ - մակրայ
5. կրվար - չեղոք սեղի բայ
6. դիտողին - գոյական, որոշյալ առում

**37** Ո՞ր նախադասություններում ընդգծվածը շաղկապ չէ (նախադասությունները կետադրված չեն):

1. Ես պատմում եմ այն **ինչ** տեսել ու զգացել եմ սեփական փորձով:
2. Աղջիկը **ոք** մազերն այդպես փոել էր ուսերին ուշադիր նայում էր փողոցի անկյունում խմբված մարդկանց:
3. **Քանի դեռ** ճրագը վառվում էր երրորդ մարդը աչքերը լաթով կապած նստած էր սենյակում:
4. Ես ծնվել եմ երգի համար Ու **մինչև** մահ պիտի երգեմ:
5. **Նախրան** պատանու հարցին պատասխանելը նա ուղեայուսակից հանեց զանազան ուտեստներ:

**38** Ո՞ր քվերի տեղում ստորակետ պիտի դրվի:

Բայց Բուդրան որի վարդապետության սկիզբը փառավոր է(1) միջուկը իմաստուն(2) և ավարտը փրկարար(3) կարեկցանքով լցված դեպի ամբոխի անհավատությունը(4) նորից դիմեց նրան(5) թշվառության և տանջանքի այդ տգետ ժառանգին: Նա բացեց ժողովրդի առաջ ճանապարհները դեպի Նիրվանան դեպի նրա երանակետ անդրբը սակայն(6) ամրոխը ծաղրում էր նրան: Եվ նա կանգնելով Հիմալայն ի վեր(7) ասաց Ով Ազնի լսիր իմ աղոթքը(8) և բույլ մի տուր որ թագավորի անհավատությունը:

**39** Տրված քառերից քանի՞սն են դերանուն:

ոչ միայն, այսօրինակ, այստեղ, ոչ ոք, բոլորը, մեկմեկի, որոշ, համայն

**40** Բառերից (կապակցություններից) քանիսի՞ բաղադրիչներն են զրկում անջատ:

մեջք(մեջքի), խոսքի(մասային), կաս(կարմիր), տնից(տուն), զան(ի)վայր, դափ(դատարկ), ըստ(ամենայնի), ուր(որ)է

**41** Բառագույզերից քանի՞սն են կազմված հականիշներից:

ցայգ-գիշեր, ի վնաս-հօգուտ, հակամետ-միտումնավոր, ճիշտ-թյուր, սեղմ-ճապաղ, վտիտ-մարմնեղ, պարպում-լիցքավորում, վատնել-կուտակել

**42** Նախադասություններից քանիստ՝ և ընդգծված գոյականական անդամի լրացում:

- Կանայք՝ խարտյաշ կամ սևաթ մազերով գեղեցկուիհներ՝ պճնված ճռիս **արդուզարդով**, ճեմում էին:
- Երևում էր՝ միջոցներ չեին խնայել՝ ձգտելով **լիովի** գոհացնել հյուրերին:
- Ծիածանագույն մետաքսե վարագույրով էին **ծածկված** պատուհանների փեղկերը, և ծաղկավոր գորգեր էին փոփած հատակին:
- Սղձավաճային **անհերթիք** խարկա՞նք էր, թե՞ դժոխային իրականություն:
- Գազանների մոտ հացի կնստեմ, ողջույնը կառնեմ **բորենիների**:

**43** Նախադասություններից քանիստ՝ անջատման խնդիր կա:

- Հեռացավ մեզանից տխուր, կարոտը սրտում:
- Նա բռունցքով ջարդեց այն, ինչ մնացել էր խաղալիքից:
- Ընչարացությունից իրեն՝ տասնութամյա չնաշխարհիկ օրիորդին, ամուսնացրին տարեց մարդու հետ:
- Չինացիները խոսում են իրարից խիստ տարրեր յոթ բարբառներով, որոնք բոլորովին էլ հասկանալի չեն այլ բարբառով խոսողին:
- Մոտեցած երկնից աստղերը պայծառ ժպտում են խաղաղ քո աչքերի պես:

**44** Նախադասություններից քանիստ են արևմտահայերենով:

- Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեր վերա է միակ հույսը:
- Բայց երգը, որ իր ալուցքեն կը թռչի, Անտես ու ստվերոտ սանդրւխներու վրա Կ'իյնա շնչահեղձ:
- Են լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերքը, նրանց արածներն ու ասածները:
- Հոս՝ քարահատակ ճամփուն վրա, ձիերու շարք մը կը քալե հազիվ լսելի ոտնաձայնով մը:

**45** Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար լրացրել **Շիշտ է, Միսալ է, Զգիտեմ** տարրերակներից որևէ մեկը:

- Պես կապով կարող են կազմվել թե՛ ձևի, թե՛ ժամանակի պարագաներ:
- Պարագաները կարող են արտահայտվել միայն գոյականով կամ մակրայով:
- Վերաբերության խնդիրը արտահայտվում է միայն կապային կառույցով:
- Միննույն բայը նույն նախադասության մեջ միաժամանակ կարող է ունենալ և խնդիր, և պարագա լրացումներ:
- Պարագաները լինում են տեղի, ժամանակի, ձևի, միջոցի:
- Ներգործող խնդիր կարող են ունենալ միայն ներգործական սեռի բայերը:

## Բ մակարդակ

**46** Համարակալված բառերում բաց բողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Զրտություն(1) գիշերներին լուսինը շող-(2) էր զցում առվի մեջ, ջրվորի պողպատ բահի վրա, պսպղում էին սերկ-իլի(3) տերևները, հովից հասկերը քսվում էին իրար, խում(4): Լուսարացին հաղում էին աստղերը ձյան գնդերի պես, շա-ագունում(5) էր արևելքը, արևի առաջին շողերը փայլվիլում էին զուլալ, ականակի-(6) լճակներում, խաղում ամպերի հետ. ասես մի անտես ձեռք բ-բ(7) շողերով ամսի սպիտակ քուլաների վրա հազարավոր նա-շեր(8) էր նկարում, որ մի քիչ հետո ավերի նույն շողերով: Արևի շողերի հետ գոլո-շի(9) էր բարձրանում արտերից, ու գիշերվաս խոնավությունն էր ան-անում(10):

- 1) 2-կ, 7-յու, 8-խ, 10-է
- 2) 1-ք, 5-ո, 8-դ, 9-ր
- 3) 3-ւ, 4-շ, 7-յու, 9-ր
- 4) 1-ք, 2-ք, 6-ր, 10-է

**47** Ո՞ր շարքի բոլոր բառերում արմատի հնչյունափոխություն կա:

- 1) խճանկար, ծածկանուն, պարտիզան
- 2) մշտավառ, վերնախավ, հոգեթրքիոն
- 3) արյունուշտ, ալրադաց, համբուրել
- 4) նստակյաց, դեռափթիք, բնաբան

**48** Ո՞ր շարքի բոլոր բառերում է ճայնավորը հնչյունափոխվել բաղաձայնի:

- 1) հոգյակ, ձվածեղ, վայրկենապար, չվացուցակ
- 2) լեզվանի, այյակ, աղվամազ, թթվահամ
- 3) կատվածագ, կղզերնակ, ուրվական, մեղվապահ
- 4) առվույտ, պատանյակ, առվեզոր, կկվականչ

**49** Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) մարմազ-բուռն ճակտում, ընձենի-մշտադար ծառի տեսակ
- 2) քերծե-արագավազ որսկան շուն, տավիդ-լարավոր երաժշտական գործիք
- 3) երախտիք-ուրիշին արած բարի գործ, տորմիդ-նավերի միավորում
- 4) կոսն-մետաղները հարթեցնելու մուրճ, վեղաք-հայ կրոնավորի գլխի ծածկույթ

**50** Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) աշակերտ, ակոս, ավելուկ
- 2) ավանդ, ամբար, անդուլ
- 3) աղանդ, ավազան, բազում
- 4) ապար, ապատամբ, ախորժակ

**51** Ո՞ր շարքի բոլոր բառերն են բավ գրված բառի բառաձևեր:

- 1) երգել – երգած, երգելիս, երգիչ, երգի՛ն
- 2) ինքը – իրենք, իր, իրենց, իրենով
- 3) տուն – տան, տնային, տներ, տունը
- 4) հասնել – հասել, հասնող, հասավ, հասանելի

**52** Ο՞ր նախադասության մեջ փոխարերական իմաստով գործածված բառ չկա:

- 1) Սի ահարկու ծայն խոպոտ աղմուկով խլացրեց զանգերի դողանջը:
- 2) Սի զարմանալի բախծոտ կյանք էր կանաչում դեմք:
- 3) Միմոնք մեխսվել էր Սոնայի տան մոտ, և նեղվածք ու ցուրտ էր, և ձգող ոչ մի տաք անկյուն չկար:
- 4) Կաքավարերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն:

**53** Տրված բառերից որի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ քնն-նախածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:

- 1) առաջնորդ
- 2) օրինակելի
- 3) մրցունակ
- 4) հանրամատչելի

**54** Ο՞ր նախադասության մեջ մեկից ավելի անկանոն բայ կա:

- 1) Դու էլ նրա գո՛վքը արա, որ զա՝ օսկե մազը ձեռին:
- 2) Ամպերը ճերմակ երամով անցան. իմ սիրտն է լայիս կարոտով անհուն:
- 3) Հետո կուշտ կերած մեր ճիերը սկսեցին բարձրանալ քարոտ արահետով՝ մեկը մյուսին հրմշտելով:
- 4) Նա հագել էր կապույտ բաճկոն, դրել էր գլխարկ, որի տակ հավաքել էր շեկիկ մազերը:

**55** Ο՞ր տարրերակում գերադրական աստիճանով դրված ածական չկա:

- 1) «Ծոկոլադ» բառն առաջին անգամ Եվրոպայում լսել են իսպանացիները ացտեկների հնագույն մայրաքաղաքը թալանելիս:
- 2) Գրասեղանի մոտ նատել էր հայ երիտասարդության մտքի ամենասիրելի դեկավարը՝ նա, որի անունը տարածված էր ամենուրեք, ուր կար գեթ մի բուռ հայություն:
- 3) Անսպասում հպարտորեն կանգնած են եգիպտական բուրգերը, որոնց հանդեպ ամենակործան ժամանակն անգամ անկարող է գտնվել:
- 4) Պատմության ամենից լուսաճաճանց մտքի հնոցում ծնված հոմերոսյան պոեմները վերացած աշխարհի արձագանքն են հունական շողշողուն առասպելների տեսքով:

**56** Ο՞ր տարրերակում բաղադրյալ ժամանակածն կա:

- 1) միտք արեց, երգչուիի պիտի դառնամ
- 2) մի՛ վիհատվիր, մոտ չեմ զա
- 3) երես մի՛ տուր, չպետք է ներես
- 4) պետք է զնամ, տարավ-բերեց

**57** Ο՞ր տարրերակում ըղճական եղանակի բայածն կա:

- 1) Շանքն է բեկվում ճակտիս վրա. Մահ, չգիտեմ, կա՞ թե՞ չկա:
- 2) Իմ գերեզմանին դուք չմոտենաք, Թոռե՛ք, որ համգչի իմ սիրտը հոգնած:
- 3) Եվ ես, որ երբեք չեմ իմացել սենտիմենտալություն, ուզեցի հրացանս առնել և հենց նրա աշքի առջև փշրել այն:
- 4) Երանի նրան, ով կարող է գեղեցիկ ստով խարվել:

**58** Ո՞ր նախադասության մեջ կապի գործածության կամ հոլովառության սխալ չկա:

- 1) Նա իրեն համար հանգիստ կարդում էր, երբ հարևանը գրգռված ներս խուժեց ու սկսեց գողողողական գողողություն:
- 2) Հանձինն քեզ՝ ես ունեմ մի լավ բարեկամ:
- 3) Իմ վրայի քծերը ցույց տալուց առաջ մաքրի՛ ձեռքերդ:
- 4) Չեր առաջարկների հետ դեռ չեմ հասցրել ծանոթանալ:

**59** Ո՞ր բարդ նախադասության կազմում թերի նախադասություն չկա:

- 1) Երեկոները, երբ մթնում էր, սովորաբար վառում էր բոլոր լույսերը:
- 2) Բելը կանգնել էր զորքից բավական հեռու, իսկ Հայկը՝ առաջին շարքում:
- 3) Մայրիկ, մի բան պիտի ասեմ, որը քեզ գուցել կուրախացնի:
- 4) Քննության ժամանակ բոլոր աշակերտներն արդեն գրում էին հարցերի պատասխանները, իսկ ես դեռ մտածում էի:

**60** Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված ժամանակի պարագա:

- 1) **Դանդաղ** իջնում էր երեկոն:
- 2) **Հենց** վերջնական որոշում ընդունես, ինձ տեղյակ կպահես:
- 3) Հաջորդ տարի՝ **Վաղ գարնանը**, ծիծոննակը վերադարձավ:
- 4) **Պետք** է հավատարիմ մարդկանցից պահակներ նշանակեմ, որպեսզի **այսուհետև** ոչ չկարողանա փախչել:

**61** Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված ենթակա չկա:

- 1) Ամենազարմանալին այն էր, որ ոչինչ չէր փոխվել իմ մանկության գյուղում:
- 2) Աշխատանքի այդ խաղաղ օրերին այնպես էր թվում, թե սարերի ետևում ընկած գյուղի մասին քաղաքում ոչ ոք չգիտի:
- 3) Երբ ընկերու լոեց, ինձ թվաց, թե գետակը նույն հանգով է պատմում:
- 4) Դիլան դային գիտի, որ ինքը զառամյալ է արդեն, քայլելիս հենվում է փայտին:

**62** Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ չկա:

- 1) Նա փերին է զմրուխտ գետի, Ցնորքներիս սիրելին:
- 2) Պարապապատի վլայից զինվորները տեսան մի խումք հեծյալների՝ ամրոցին արագ մոտենալը:
- 3) Ես մկրտվել եմ հայկական եկեղեցում, որի արմատները ծգվում են մինչև Թաղես և Բարդուղիմեսու առաջյալները:
- 4) Մեր՝ երեխաներիս աշքը չէր հեռանում նրանցից. ուշիուշով դիտում էինք արագիլներին:

**63** Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի:

- 1) Բաթը զայրույթից կորցրել էր իրեն և նրա բիբերը թվում էր ուզում էին դուրս պոռթկալ ակնակապիճներից:
- 2) Տղան կանչում էր հորը իսկ նա ձորն իջնելով այլևս չէր լսում որդու կանչը:
- 3) Խորհում էի որ երեք ամիս է քեզ չեմ տեսել և ամեն օր չարացել եմ քեզ վրա:
- 4) Որ նրանք հայ լինեն ես իմ հայությունից կիրաժարվեմ հայը հող կվարի ծառ կտնիկի շալակով փայտ կրերի:

**64** Ո՞ր նախադասության մեջ բայի հրամայական եղանակով արտահայտված ստորոգյալ կա (շեշտերը դրված չեն):

- 1) - Նկատի ունեցիր, որ ակադեմիական թատրոնն արդեն քեմադրել է իմ պիեսը,- ակնոցն ուղեկով՝ ասաց երիտասարդը:
- 2) Երբ Գոզոն դժգոհում էր մեր ազարակի ծառերից պտուղ քաղողներից, մայրս գորովաճրով ասում էր.  
- Թող մի քիչ էլ քաղեն տանեն, ձայն չհանես. դրանով մեր պտուղը չի պակասի:
- 3) - Հայրիկիդ կասեմ, որ թույլ տա՝ թռուցիկ թոցնես,- ասաց մայրս,- բայց այլևս թելը կտուրի ձողին չպիտի կապես:
- 4) - Բարեկամներս,- ասաց նիստը վարողը,- խնդրում եմ հարցերը տալ պարզ, որոշակի և տղամարդու պես տեր կանգնել տրված հարցին:

**65** Ո՞ր տարրերակի բոլոր բանաստեղծությունների հեղինակն է Վ. Տերյանը:

- 1) «Ուկեհանդերձ եկար», «Որպես Լաերտի որդին», «Տաղ անձնական»
- 2) «Աշնան մեղեղի», «Կարուսել», «Սի մրահոն աղջիկ տեսա»
- 3) «Սի խառնեք մեզ ձեր վայրի...», «Տիրություն», «Անվերնազիր»
- 4) «Կարծես թե դարձել եմ ես տուն», «Fatum», «Իմ խաղաղ երեկոն է հիմա»

**66** Ո՞ր տողը Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունից չէ:

- 1) Արևոտ մի սար եմ հիշում՝ ճակատին ձյունի պատառիկ...
- 2) Աշխա՛ր անցիր, Արարատի նման մերմակ գագաթ չկա...
- 3) Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում...
- 4) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբածայն երգերը մեր...

**67** Ո՞ր նախադասություններում փոխանվանաբար գործածված թվական կա:

1. Անիշելի ժամանակներից սկսած՝ այդ գյուղում նշտավես ապրում էր հարյուր քսանյոթ մարդ. նրանցից քսանութը տղամարդիկ էին, մնացածը՝ կանայք ու երեխաներ:
2. Ե՛վ Չարենցը, և Բակունցը հիացած էին Տերյանով. երկուսի համար էլ վերջինս կատարելատիպ էր, բանաստեղծական արվեստի չափանիշ:
3. Իսկ երկրորդները նրանք են, ովքեր կոչված են կյանքի խորհուրդն օրիներգելու:
4. Երբ Ավետիքը դառնում է յոթ-ութ տարեկան, ծնողները նրան տալիս են սովորելու գյուղի ուսումնարանում:
5. Այդ գիտնականը թարգմանություններ էր անում հարյուր տասնչորս լեզվից, վարժ խոսում էր երեսունինը լեզվով, մասնակի տիրապետում տասնմեկին:

**68** Ո՞ր նախադասություններում համաձայնության սխալ կա:

1. Միացյալ Նահանգները փորձում է խաղաղություն հաստատել Մերձավոր Արևելքում:
2. Այս ամենը վկայում են, որ վերահսկողությունը պատշաճ մակարդակի վրա չի եղել:
3. Ամբողջ ժողովուրդը պապանձված կանգնել էին՝ ասես խլացած Բուլայի մահացու սպառնալիքների առաջ:
4. Հորս աշքերում կային հոգնությունը քողարկող ժայիս և քնքշության ցոլքեր:
5. Գործող բոլոր կուսակցությունները ներկայացնելու են իրենց քաղաքական ծրագրերը:

**69**

## Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ չեն բխում նրանից:

Հնավաճառից հինգ դոլարով գնված նկարը կարող է ամերիկացի նկարիչ Զերսոն Պոլլորի կտավը լինել. ահա այսպիսի ենթադրություն է արել արվեստաբան Պիտեր Բիրոն: Եթե ենթադրությունը ճիշտ է, ապա կտավը արժի 40-50 միլիոն դոլար:

Վիճելի նկարի տերը նախկին վարորդ, այժմ թոշակառու Թերրի Հորթոնն է, որի ավտոտնակում նկարը մնացել է մի քանի տարի: Մի օր, երբ այն նկատել է տեղի համալսարանի պրոֆեսոր Բիրոն և ճանաչելով Պոլլորի ոճը՝ ենթադրություն է արել, սկսվել է փորձաքննություն: Փորձագետները նկարի վրայի մատնահետքերը համարել են Պոլլորի արվեստանոցում եղած նկարներում առկա մատնահետքերի հետ, և ենթադրությունը առ այն, որ նախկին վարորդի մոտ գտնվող նկարը Պոլլորի վրձնին է պատկանում, հաստատվել է: Արդյունքում յոթանասունչորսամյա թոշակառուն վիաստորեն հսկայական կարողության տեր է: Չե՞ որ ամերիկյան հետպատերազմյան խոշորագույն նկարիչներից մեկն է համարվում Պոլլորը, որի հանրահայտ «Համար 5, 1948» կտավը, օրինակ, մասնավոր գործարքի արդյունքում վաճառվել է 140 միլիոն դոլարով. դա այն ժամանակներում գեղանկարչության մեջ վճարված գումարներից ամենախոշորներից է: Ավելի ուշ նկարչի մեկ այլ կտավ՝ «Համար 17Ա»-ն, վաճառվել է 200 միլիոն դոլարով:

Զերսոն Պոլլորը ամերիկյան արստրակտ էքսպրեսիոնիզմի ամենավառ ներկայացուցիչն է, հայտնի է ոչ միայն նկարների գաղափարական խորությամբ, այլև իր ստեղծած յուրահատուկ՝ ներկերը լցնելու և ցայտեցնելու տեխնիկայով: Բացի այդ, նա կտավը չէր ճգում ենթանկարակալի վրա, այլ գերադասում էր ամրացնել հատակին՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով նկարել չորս կողմից: Նա ասում էր, որ այդպես կարծես գտնվում է նկարի մեջ:

Նկարիչը անվանումներ չէր տալիս նկարներին, այլ սույն համարակալում էր դրանք՝ դիտողին իր նախանշած գաղափարներով չկաշկանդելու համար:

1. Պոլլորի նկարների բարձր գինը կապված է ոչ թե դրանց բովանդակության, այլ ներկերը ցայտեցնելու միջոցով նկարելու տեխնիկայի հետ:
2. Համալսարանի պրոֆեսորը, նկարի վրա նկատելով հայտնի նկարչի մատնահետքերը, պարզել է, որ կտավը պատկանում է Զերսոն Պոլլորի վրձնին:
3. «Համար 5, 1948» հայտնի կտավը տարիներ շարունակ մնացել է մի նախկին վարորդի ավտոտնակում:
4. Թերրի Հորթոնին այստեղ նկարը իրականում շատ ավելին արժի հնավաճառին վճարված գումարից:
5. Կտավը հատակին ամրացնելու շնորհիվ Պոլլորը կարողանում էր նկարել կտավի բոլոր կողմերից:

**70**

## Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել Շիշտ է, Միալ է, Զգիտես տարրերակներից որևէ մեկը:

1. Մակրայր չի կարող լինել կազմությամբ պարզ բառ:
2. Գոյականի կրկնությամբ կազմված որոշ բառեր մակրայներ են:
3. **Առաջ, հեռու** բառերը կարող են հանդես գալ և որպես կապ, և որպես մակրայ:
4. **Որեն, ովիմ** ածանցները կազմում են մակրայներ:
5. Մակրայները դառնում են ոչ միայն բայով, այլև ածականով արտահայտված անդամի լրացում:
6. **Երբեմ, երբեկիցն** բառերը ժամանակի մակրայներ են, **բազմիցս, կրկնակի** բառերը՝ չափի մակրայներ: